Ծառայությունների տեխնիկական առաջադրանք

Ծառայության անվանումը.	Հայաստանի չորս համայնքներում երիտասարդների ներգրավվածության մոնիտորինգի գործիքի փորձարկման փորձագետ
Ծրագրի անվանումը.	«Հայաստանի քաղաքացիական կրթություն և մասնակցություն»
Ծառայությունների մատուցման ժամանակահատվածը.	Մայիս-Օգոստոս 2023
Ծառայությունների իրականացման վայրը	Երևան, Գորիս (Սյունիք), Արմավիր (Արմավիր), Մարտունի (Գեղարքունիք) և Դիլիջան (Տավուշ)

Ծրագրի նկարագրություն.

«Հայաստանի քաղաքացիական կրթություն և մասնակցություն» ծրագիրն (այսուհետ՝ Ծրագիր) իրականացնում է «Փրոջեքթ Հարմոնի Հայաստան» ՀԿ գլխավորած կոնսորցիումը, որի անդամներն են նաև Մարդկային զարգացման միջազգային կենտրոնը, Սիվիտաս Հայաստանը, Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնը 2022-2027թթ.: Ծրագիրը հնարավոր է դարձել ամերիկյան ժողովրդի աջակցությամբ՝ ԱՄՆ ՄԶԳ միջոցով:

Ծրագիրը կբարելավի Հայաստանում դպրոցական և արտադպրոցական քաղաքացիական կրթության որակն ու կընդլայնի դրա ազդեցության շրջանակը, որպես հանրային կյանքում երիտասարդների ներգրավվածության խթանման միջոց՝ աջակցելու Հայաստանում ժողովրդավարական հասարակության ուժեղացմանը:

Ծրագիրը սերտորեն համագործակցում է ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (ԿԳՄՍՆ) և այլ շահագրգիռ կողմերի հետ:

Որպես առանցքային մոտեցում՝ Ծրագիրը կենտրոնանում է երիտասարդության դրական զարգացման շրջանակի (PYD) խաչվող չորս տիրույթների և դրանց միջև փոխլրացման ապահովման վրա: Երիտասարդության դրական զարգացման շրջանակի (PYD) խաչվող չորս տիրույթներն են՝ ներքին և արտաքին ռեսուրսների ձևավորումը, գործունեությունը, ներդրումը և նպաստող միջավայրը: Ակնկալվում է, որ երկրում քաղաքացիական կրթության ոլորտի ընթացիկ բարեփոխումների շնորհիվ և երիտասարդության ոչ ֆորմալ ներգրավման միջոցով, Ծրագիրը կբարելավի որոշումների կայացման գործընթացում երիտասարդների մասնակցության և երիտասարդական առաջնորդության դրսևորման հնարավորությունները: Ակնկալվում է նաև, որ դրանք համակարգային փոփոխությունների շրջանակներում կատալիզատորի դեր կստանձնեն և կնպաստեն ու կապահովեն երիտասարդների ավելի լայն քաղաքացիական մասնակցություն:

Ծառայությունների նկարագրություն և հիմնական պարտականություններ.

Ծրագրային թիմը նպատակ է հետապնդում մոնիտորինգի և գնահատման, երիտասարդության հանրային քաղաքականության ոլորտներում նշանակալի փորձառությամբ փորձագետի ներգրավմաբ ապահովել Ծրագրի Նպատակ 2-ի գործողությունների արդյունավետ

իրականացումը, մասնավորապես Հայաստանի չորս համայնքներում երիտասարդների ներգրավվածության մոնիտորինգի գործիքի փորձարկումն ու լրամշակումը:

Հայաստանի երիտասարդների ներգրավվածության մոնիտորինգի գործիքը մշակվել է միջազգային փորձագետի կողմից և ներառում է առցանց հարցման հարցաթերթ, որի նպատակն է տվյալներ հավաքագրել համայնքներում որոշումների կայացման գործընթացներում երիտասարդների ներգրավվածության համար առկա մեխանիզմների վերաբերյալ նրանց իրազեկվածության և ներգրավվածության պրակտիկայով բավարարվածության մակարդակները մշտադիտարկելու նպատակով: Առաջադրանքի նպատակն է տեղայնացնել մշակված հարցաթերթը և փորձարկել չորս համայնքներում՝ ներգրավելով 15-29 տարեկան երիտասարդների՝ ըստ այնպիսի չափանիշների, ինչպիսիք են, օրինակ՝ տարիքը, սեռը, սոցիալական խոցելության աստիճանը, կրթությունը, ամուսնական կարգավիճակը և այլն:

Փորձագետի ներգրավումից ակնկալվող արդյունքը որոշումների կայացման գործընթացում երիտասարդների մասնակցության ճշգրիտ և ստուգման ենթակա/չափելի տվյալների հավաքագրումն ապահովող և մշտադիտարկման համակարգի ձևավորմանն աջակցելն է:

Փորձագետի խնդիրներն ու պարտականությունները ներառում են, բայց չեն սահմանափակվում ներքոհիշյալով.

- իրականացնել Հայաստանում որոշումների կայացման գործընթացում երիտասարդների ներգրավվածության մոնիտորինգի գործիքի տեղայնացում,
- մշակել մոնիտորինգի գործիքի պիլոտի մեթոդաբանությունը, ներառյալ՝ պիլոտի ընտրանքը, մասնակիցների ընտրության չափանիշները և իրականացման պլանը,
- իրականացնել մոնիտորինգի գործիքի պիլոտը՝ ներառյալ մասնակիցների հավաքագրումը, տվյալների հավաքագրումը, տվյալների կառավարում և վերլուծությունը՝ ՄԶՄԿ ծրագրային թիմի աջակցությամբ,
- մշակել և ներկայացնել զեկույց մոնիտորինգի գործիքի պիլոտի արդյունքների վերաբերյալ,
- ներկայացնել առաջարկներ նկատված թերությունները շտկելու վերաբերյալ,
- լրամշակել մոնիտորինգի գործիքը՝ առաջարկները ՄԶՄԿ ծրագրային թիմի և միջազգային փորձագետի հետ քննարկելուց և հաստատվելուց հետո,
- ներկայացնել ծառայությունների արդյունքները, այդ թվում՝ պիլոտի գործընթացը, ձեռք բերված արդյունքները, լրամշակված գործիքը շահագրգիռ և շահառու խմբերի հետ քննարկումներում,
- ծառայությունները մատուցել՝ հավատարիմ մնալով հետազոտական էթիկայի լավագույն փորձին ու ընթացակարգերին,
- ծառայությունների մատուցման ընթացքում սերտորեն համագործակցել ՄԶՄԿ ծրագրային թիմի հետ, աջակցել Ծրագրային թիմին գործողությունների, այդ թվում՝ մոնիտորինգի գործիքի պիլոտի կազմակերպական աշխատանքներին:

Ծառայությունների մատուցման ընթացքում ՄԶՄԿ ծրագրային թիմը կտրամադրի լիարժեք և բազմակողմանի կազմակերպական և վարչական աջակցություն:

Ինստիտուցիոնալ կարգավորումներ և հաշվետվողականություն.

Փորձագետը մատուցելու է ծառայությունները Ծրագրի ղեկավարի անմիջական վերահսկողության ներքո՝ Ծրագրի Երիտասարդների ներգրավվածության մոնիտորինգի կոմպոնենտի համակարգողի ղեկավարությամբ և հաշվետու է Ծրագրի տնօրենին:

Անհրաժեշտ որակավորումներ:

Կրթություն

- Փորձագետը պետք է ունենա քաղաքական կամ հասարակական գիտությունների համալսարանական կրթություն: Ընդունելի կհամարվի նաև հարակից ոլորտների համալսարանական կրթությունը՝ գնահատման և մոնիտորինգի ոլորտում աշխատանքային փորձի համադրությամբ:

Աշխատանքային փորձ

- մոնիտորինգի և գնահատման աշխատանքների իրականացման առնվազն երեք տարվա աշխատանքային փորձ,
- քաղաքականության հետազոտությունների իրականացման, հետազոտական թիմում աշխատանքների առնվազն երեք տարվա փորձ,
- հետազոտության թե՛ որակական, թե՛ քանակական մեթոդների կիրառման փորձառություն:

Լեզուների իմացություն

- Հայերեն և անգլերեն լեզուների իմացությունը պարտադիր է (գրավոր և բանավոր):

Պահանջվող հմտություններ

- որակական և քանակական հետազոտություններ և վերլուծություններ իրականացնելու կարողություն,
- որակական և քանակական տվյալներ հավաքագրելու, մշակելու, վերլուծելու և նորարարական մեթոդներով ներկայացնելու հմտություններ,
- սթրեսային իրավիճակներում և սեղմ ժամկետներում աշխատելու, այլընտրանքային և հրատապ փոփոխությունների պահանջներին և պայմաններին հարմարվելու կարողություն,
- գրավոր և բանավոր հաղորդակցման գերազանց հմտություններ, մասնավորապես՝ հետազոտական բարդ և դժվարամատչելի տվյալները պարզորոշ և հասկանալի կերպով ոչ մասնագետներին հաղորդելու և ներկայացնելու կարողություն,
- վերլուծական գերազանց հմտություններ, ներառյալ՝ բանավոր և գրավոր հաղորդակցությունը,
- միջանձնային հարաբերություններ հաստատելու գերազանց հմտություններ, աշխատանքային թիմի կազմում գործելու կարողություններ,
- առաջադրանքի իրականացման հանդեպ դրական, կառուցողական և հետևողական մոտեցման դրսևորում և վարքագիծ:

Ծառայության ընդհանուր շրջանակը. Միջնարդյունքներ, վերջնարդյունքներ և ժամկետներ

h/h	Առաջադրանք	Միջնարդյունք/վերջնարդյունք	Ժամկետներ
1.	Ծրագրի միջազգային փորձագետի կողմից մշակված՝ Հայաստանում	Մոնիտորինգի տեղայնացված գործիքի նախագիծ՝ հայերեն	Մայիս-Հունիս, 2023

	որոշումների կայացման մեջ երիտասարդների ներգրավվածության մոնիտորինգի գործիքի տեղայնացում		
2.	մոնիտորինգի գործիքի պիլոտի մեթոդաբանության մշակում՝ ՄԶՄԿ ծրագրային թիմի հետ սերտ համագործակցությամբ	Մոնիտորինգի գործիքի պիլոտի պլան և մեթոդաբանություն, ներառյալ, բայց չսահմանափակվելով հետևյալով. նպատակը և խնդիրները, պիլոտի ընտրանքը և մասնակիցների հավաքագրման ռազմավարությունը, տվյալների հավաքագրման մեթոդները, տվյալների կառավարումը, տվյալների վերլուծությունը, հաշվետվությունը, էթիկական նկատառումները, և աշխատանքային պլանը:	Հունիս, 2023
3.	Դաշտային աշխատանք	Մոնիտորինգի գործիքի պիլոտի և դաշտային աշխատանքների իրականացման փաստաթղթեր	Հուլիս, 2023
4.	Վերլուծություն և հաշվետվություն - տվյալների վերլուծություն - գնահատման հաշվետվության առաջին նախագծի մշակում	Զեկույցի նախագիծ՝ հայերեն	Օգոստոս, 2023
5.	Պիլոտի արդյունքերի ներկայացում	Աշխատանքային քննարկում	Օգոստոս, 2023
6.	Վերջնական զեկույց - Զեկույցի լրամշակում՝ հաշվի առնելով փորձագիտական կարծիքներն ու նկատառումները; - Մոնիտոինգի գործիքի լրամշակում՝ հաշվի առնելով պիլոտի արդյունքներն ու փորձագիտական կարծիքներն ու նկատառումները	Վերջնական զեկույց, ներառյալ՝ մոնիտոինգի լրամշակված գործիքը	Օգոստոս-Սեպտեմբեր, 2023